**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՐԱԿԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՎՏԽ-18/1.1**

ք.Երևան «08» 11 2018 թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա.Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արման-Թաման» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Մ. Մովսիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **որակի տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետները ներկայացված են պայմանագրի N 1 Հավելվածում:

2.4.5 Եթե պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Կատարողը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **145000 (_մեկ հարյուր քառասունհինգ հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի

փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ քննչական կոմիտե | «Արման-Թաման» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 | ՀՀ Գեղարքունիքի մարզ,գ. Կարմիրգյուղ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական | «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,Գավառի մ/ճ |
| վարչություն, | Հ/Հ 11500844540100 |
| Հ/Հ 90001019776 | ՀՎՀՀ 08417115 |
| ՀՎՀՀ 02631263 | էլ. հասցեն՝ mouradmo@mail.ru |
| | հեռ. (094)772291 |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ | Կ.Տ |

Հավելված N 1
« 08 » նոյեմբերի 2018թ. կնքված
ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՎՏԽ-18/1.1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 71351540/6 | տեխնիկական հսկողության ծառայություններ | դրամ | 145000 | 1 | ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ Բունիաթյան փողոց 1-ին անցում N2 հասցեում: | 15.12.2018թ |

| Տեխնիկական բնութագիր |
|---|
| 1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ինժեներական նախագծերին, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:<br>2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:<br>3. Տեխնիկական հսկողություն իրականացնողի հիմնական պարտականություններն են ՝<br>• շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար լուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,<br>• ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը վերանորոգման նորմերին և կանոններին<br>Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների կատարման շեղում հայտնաբերելուց անհապաղ տեղեկացնել Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,<br>• ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովվի սպեցիֆիկացիաներում և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,<br>• վերահսկել և գնահատել շինաշխատանքների գործընթացը, որպեսզի ապահովվի շին աշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի,<br>• ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները , որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր հաշվարկները, որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,<br>• ստուգել բոլոր ծավալային չափերը և հաշվարկները, որոնք անհրաժեշտ են վճարման համար,<br>• կատարել որակի և քանակի հսկումը, այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման շրջանակում,<br>• գտնել շինարարության ժամանակ առաջացող խնդիրները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքները արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,<br>• հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքներն անվտանգ իրականացնելու |

հետ և հրահանգել Կապալառուին տեղադրել նշաններ, լուսավորության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,

- կատարել անհրաժեշտ գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ընդգրկելով կատարված աշխատանքների հավաստագրերը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),
- կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և մասնակցել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,
- շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարները, անհրաժեշտ գծագրերը, ծածկված աշխատանքների ակտերը, փորձարկման ակտերը, սերտիֆիկատները:
- Շինարարության ողջ ընթացքում ապահովել տեխ. հսկիչի մշտական ներկայությունը օբյեկտում:

## ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| Ն/Ն | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չափի միավոր | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | **Ներքին հարդարում** | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | |
| 1 | Լամինատե հատակի քանդում | 100մ$^2$ | 0,80 |
| 2 | Ց/ա հարթեցուցիչ շերտի քանդում | 100մ$^2$ | 0,01 |
| 3 | Միջնորմների քանդում | մ3 | 1,25 |
| 4 | Պատերի կերամիկական սալերի քանդում | մ2 | 12,58 |
| 5 | Ց/ավազե սվաղի քանդում պատերից և առաստաղից | 100 մ$^2$ | 0,126 |
| 6 | Գաջի սվաղի քանդում պատերից | 100 մ$^2$ | 0,488 |
| 7 | Պատերի մաքրում հին ներկից | 100մ$^2$ | 8,48 |
| 8 | Խեցեսալե հատակների քանդում | 100 մ$^2$ | 0,01 |
| 9 | Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով | տն | 4,11 |
| 10 | Տեղափոխում 5կմ | տն | 4,11 |
| | **Գիպսակարտոնե միջնորմներ** | | |
| 1 | Միջնորմների երեսապատում 9,5մմ գիպսաստվարաթղթե սալերով, ցինկապատ պրոֆիլներից կարկասի վրա | 100մ2 | 2,3368 |
| 2 | Կարկասի պատրաստման համար պրոֆիլի արժեքը 40մմ | գմ | 595,87 |
| 3 | Պատերի ձայնամեկուսիչ շերտի իրականացում 40մմ պենոպլաստե սալերից | մ3 | 9,35 |
| | **Պատեր, միջնորմներ** | | |
| 1 | Միջնորմի իրականացում 10 սմ պեմզաբլոկով | մ3 | 12,67 |
| 2 | Միջնորմների և պատերի ամրանավորում | տն | 0,274 |
| 3 | Ամրան Փ6 Ա-I | տն | 0,105 |
| 4 | Պողպատե թերթ 4*50*360 | տն | 0,1640 |
| 5 | Դյուբել Փ5, Լ-70մմ | հատ | 546,0 |
| | **Հատակներ** | | |
| 1 | Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ. | մ$^2$ | 1,32 |
| 2 | Հատակի միաշերտ հիդրոմեկուսացում տոլով բիտումի մածիկի վրա | 100 մ$^2$ | 0,01 |
| 3 | Խեցեսալե հատակի կառուցում 300*300մ | մ$^2$ | 1,32 |
| 4 | Հատակների կառուցում պրեսգրանիտից 40*40, չսահող | մ$^2$ | 13,8 |
| 5 | Պրեսգրանիտե շրիշակների կառուցում H=10սմ | 100գմ | 0,255 |
| 6 | Լամինատե հատակի կառուցում 8մմ AC4 կարգի | 100մ$^2$ | 1,307 |

| | | | |
|---|---|---|---|
| | **Հարդարման աշխատանքներ** | | |
| 1 | Պատերի լավ որակի սվաղում գաջի շաղախով | 100 մ$^2$ | 0,49 |
| | Պատերի սվաղում g/ավազային շաղախով ցանցով | 100մ$^2$ | 0,126 |
| | Պատերի երեսապատում հախճասալերով 200*250մմ H=2,8մ | 100մ$^2$ | 0,126 |
| 2 | Պատերի գաջի սվաղի նորոգում մինչև 10մ2 | մ$^2$ | 71,45 |
| 3 | Նույնը առաստաղների | մ$^2$ | 13,829 |
| 4 | Պատերի բարելավված ներկում կիսափայլուն լատեքսով | 100 մ$^2$ | 10,30 |
| 5 | Առաստաղների բարելավված ներկում կիսափայլուն լատեքսով | 100 մ$^2$ | 2,77 |
| | **Այլ աշխատանքներ** | | |
| 1 | Արտաքին աստիճանավանդակի պատերի երեսապատում 30մմ հաստության բազալտե սալերով | մ$^2$ | 9,08 |
| 2 | Մուտքի հարթակի և աստիճանների երեսապատում 30մմ բազալտե սալերով | մ2 | 1,50 |
| | **Մետաղական հարթակ աստիճանավանդակում** | | |
| 1 | Մետաղական դետալներով հարթակի կարկասի կառուցում աստիճանավանդակում | տն | 0,104 |
| 2 | Անկյունակ 100*100*8մմ | գմ | 4,8 |
| 3 | Պողպատյա քառակուսի խողովակ 100*100*4 | մ | 3,70 |
| 4 | Ծածկի միաձույլ ե/բ հատվածների կառուցում Բ-20 դասի ծանր բետոնից | մ$^3$ | 0,144 |
| 5 | Ամրան Ա - Ա500c Φ16 | տն | 0,03584 |
| 6 | Մետաղական կարկասի յուղաներկում | 100 մ$^2$ | 0,0340 |
| | **Դռներ, պատուհաններ** | | |
| | **Քանդման աշխատանքներ** | | |
| 1 | Գոյություն ունեցող մետաղապլաստե դռների քանդում | 100 մ$^2$ | 0,0817 |
| 2 | Գոյություն ունեցող պատուհանագոգերի քանդում | 100 մ$^2$ | 0,084 |
| 3 | Դռների և պատուհանների թեքությունների գաջի սվաղի քանդում | 100 մ$^2$ | 0,07 |
| 4 | Շին.աղբի բարձում ինքնաթ. ձեռքով | տն | 0,35 |
| 5 | Տեղափոխում 5կմ | տն | 0,35 |
| | **Բացվածքներ** | | |
| 1 | Մետաղապլաստե բլոկով, կաղնեգույն, 60մմ , 4+4մմ ապեկափաթեթով դռների տեղադրում / հայկական պրոֆիլ / | մ$^2$ | 9,45 |
| 2 | Մետաղապլաստե բլոկով, կաղնեգույն, 60մմ , 4+4մմ ապեկափաթեթով դռան և վիտրաժի տեղադրում / հայկական պրոֆիլ / | մ$^2$ | 13,02 |
| 3 | Մետաղապլաստե բլոկով, սպիտակ, 60մմ , 4+4մմ ապեկափաթեթով դռների տեղադրում / հայկական պրոֆիլ / | մ$^2$ | 9,45 |
| 4 | Ապամոնտաժված մետաղապլաստե 0,9*2,1 չափի սպիտակ դռների տեղադրում 2 հատ | մ$^2$ | 3,78 |
| 5 | Ապամոնտաժված մետաղապլաստե 0,9*2,1 չափի սպիտակ դռան վերանորոգում և տեղադրում 1հատ | մ$^2$ | 1,89 |
| 6 | Քարե պատերում, մինչև 2մ բարձրությամբ բացվացքներում տրավերտինե 30մմ սալերից պատուհանագոգի տեղադրում | 100մ$^2$ բացվ. | 0,395 |
| 7 | Տրավերտինե, եզրահանված և հղկափայլեցված 30մմ հաստության պատուհանագոգի արժեք | մ2 | 8,44 |
| | **Հարդարման աշխատանքներ** | | |
| 1 | Պատուհանների և դռների թեքությունների սվաղ գաջի շաղախով | 100 մ$^2$ | 0,07 |
| 2 | Թեքությունների և պատերի ներկում լատեքսային ներկով | 100 մ$^2$ | 0,07 |
| 3 | Սվաղի անկյունակ | գմ | 57,16 |
| | **Մետաղական դուռ** | | |
| 1 | Մետաղական ճաղավանդակով դռան տեղադրում քառ, խողովակից | տն | 0,116 |
| 2 | Պողպատյա ուղղանկյուն խողովակ 80*40*2 | մ | 8,80 |
| 3 | Պողպատյա ուղղանկյուն խողովակ 50*30*2 | մ | 10,40 |
| 4 | Պողպատյա քառակուսի ձող 10*10մմ | մ | 14,20 |
| 5 | Պողպատե անկյունակ 20*20*2 | մ | 10,40 |
| 6 | Պողպատե թիթեղ 2մմ | մ2 | 2,40 |
| 7 | Պողպատ շերտավոր 30*3 | գմ | 4,00 |
| 8 | Ծխնի | զույգ | 4,0 |
| 9 | 4+4մմ ապակեփաթեթ | մ2 | 0,3 |
| 10 | Դռան երեսապատում երկկողմանի լամինացված սալով | մ2 | 1,86 |

| | | | |
|---|---|---|---|
| 11 | Դռան ջերմամեկուսիչ շերտ 20մմ պենոպլաստե սալով | մ2 | 1,86 |
| 12 | Մետաղական բռնակ | հատ | 1,0 |
| 13 | Սարքավորումներ / Шпингалет/ | հատ | 2,0 |
| 14 | Ներկառուցվող փական | հատ | 1,0 |
| 15 | Մետաղական դռան յուղաներկում | 100 մ² | 0,0750 |
| | **Ջեռուցում** | | |
| 1 | Ալյումինե նոր մարտկոցների տեղադրում H = 500 0,129Կվտ, 100 հատ | ԷԿՄ | 30,00 |
| 2 | Ալյումինե շերտով պոլիպրոպիլենե, տաք ջրի համար խողովակների մոնտաժում , PN=10 d=20մմ / փորձարկումով / | գմ | 25,00 |
| 3 | Մարտկոցի վերևի փական Φ15 | հատ | 10,00 |
| 4 | Մարտկոցի ներքևի փական Φ15 | հատ | 10,00 |
| 5 | Մարտկոցի մոնտաժային կոմպլեկտ | հատ | 10,00 |
| 6 | Առկա ջեռուցիչ սարքերի ապամոնտաժում | հատ | 10,00 |
| | **Էլեկտրատեխնիկական մաս** | | |
| | **Էլեկտրական լուսավորություն** | | |
| 1 | Լուսավորության մուտքային վահանակի տեղադրում, 40Ա-380Վ եռաֆազ, խմբային 220Վ 2x16Ա, 8x25Ա միաբևեռ ավտոմատ անջատիչներով | լրակազմ | 1,0 |
| 2 | Սարքավորումների մոնտաժման վահանակ 36 մոդուլի համար IP 65 | հատ | 1,0 |
| 3 | 40Ա եռաֆազ ավտոմատ անջատիչ TX3 60004P, C63A | հատ | 1,0 |
| 4 | 16Ա միաֆազ ավտոմատ անջատիչ, TX3 6000 1P B16A | հատ | 2,0 |
| 5 | 25Ա միաֆազ ավտոմատ անջատիչ , TX3 6000 1P B25A | հատ | 8,0 |
| 6 | Լուսատու առաստաղային LED լամպով 220Վ, 18Վտ , 1200մմ | հատ | 19,0 |
| 7 | Լուսատու արտաքին պատի, IP 64 LED լամպով 220Վ, 20Վտ | հատ | 1,0 |
| 8 | Ջահ էլեկտրաշիկացման թելիկով լամպով 3x100Վտ | հատ | 3,0 |
| 9 | Ջահ էլեկտրաշիկացման թելիկով լամպով 5x100Վտ | հատ | 8,0 |
| 10 | Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով , հատվածքը 3x4 մմ2 ՊՊՎԳ | 100մ | 2,0 |
| 11 | Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 3x2,5 մմ2 ՊՊՎԳ | 100մ | 4,2 |
| 12 | Անջատիչ նորմալ տարբերակի, միաստեղ, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա | հատ | 22,0 |
| 13 | Անջատիչ նորմալ տարբերակի, երկտակած, թաքնված տեղադրման համար 220Վ,6Ա | հատ | 1,0 |
| 14 | Երկբևեռ խրոցակային վարդակ երրերդ հողանցման հպակով 220Վ6Ա, | հատ | 48,0 |
| 15 | Տուփ անջատիչների, խրոցակային վարդակների տեղադրման համար | 100հտ | 0,71 |
| 16 | Ճյուղավորիչ տուփ ներսի փակ տեղադրման համար | 100հտ | 0,40 |
| 17 | Ճարմանդ ներսի հաղորդալարերի ամրակապման համար | 100հտ | 14,0 |
| 18 | Ակոսների փորում 20*40 | 100մ | 1,0 |
| 19 | Ակոսագծերի գաջի սվաղում | 100մ² | 0,04 |
| | **Արտաքին լուսավորության ցանց** | | |
| 1 | Հերմետիկ պակետային անջատիչ, 220Վ, 25Ա Legrand | լ-մ | 1,0 |
| 2 | Հաղորդալար, պղնձե ջիղով, մեկուսացված, բաժանիչ հիմքով հատվածքը 3x2,5 մմ2 ՎՎԳ | 100մ | 0,4 |
| 3 | Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակների տեղադրում Φ20մմ Պ20 | 100մ | 0,4 |
| 4 | Լուսարձակ IP65 տարբերակի, ներկառուցված թողարկող կարքաբերող սարքով ГО 04-150-005 | հատ | 4,0 |
| 5 | Մետալոհալոգեն լամպ 220Վ, 150Վտ | հատ | 4,0 |
| 6 | Մետաղական բարձակ լուսարձակների տեղադրման համար | հատ | 4,0 |
| 7 | Հեղյուս պնդօղակով M16 | հատ | 4,0 |
| 8 | Անցքերի շաղափում քարե պատի մեջ մինչև 60սմ | 100 հատ | 0,04 |
| 9 | Ճարմանդ ամրակապման համար | 100հտ | 0,8 |
| | **Ապամոնտաժման աշխատանքներ** | | |
| 1 | Ավտոմատ անջատիչներով լուսավորության վահանակի ապամոնտաժում | հտ | 1,0 |
| 2 | Գոյություն ունեցող լուսատուների ապամոնտաժում | հատ | 10,0 |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Վարդակների և անջատիչների ապամոնտաժում | հատ | 10,0 |
| | **Հրդեհային ազդանշանում և պահպանության համակարգ** | | |
| 1 | 8 մուտքանի հսկիչ պանել LCD էկրանով, ընդարձակման հնարավորությունով | հատ | 1,00 |
| 2 | Մալուխ հատվածքը CV4U | մ | 200,00 |
| 3 | Հրդեհային ձեռքի ազդասարք | հատ | 2,00 |
| 4 | Ծխային տվիչ SEC-M532 | հատ | 34,00 |
| 5 | Լուսաձայնային շչակ | հատ | 2,00 |
| 6 | Ամրակապման ճարմանդ | 100հտ | 4,00 |
| 7 | Մալուխի սակառ 16x16մմ | 100մ | 1,80 |
| 8 | Անցքերի շաղափում միջնորմների մեջ մինչև 25սմ | 100 հատ | 0,08 |
| 9 | Անցքերի շաղափում քարե պատի մեջ մինչև 60սմ | 100 հատ | 0,02 |
| 10 | Անցքերի բացում միջհարկային ծածկերում | 100 տեղ | 0,01 |
| 11 | Ակոսների փորում 20*40 | 100մ | 1,00 |
| 12 | Ակոսագծերի գաջի սվաղում | 100մ$^2$ | 0,04 |
| | **Ջրագծի ներքին տեղամաս** | | |
| 1 | Լվացարանների ապամոնտաժում | 100հատ | 0,03 |
| 2 | Զուգարանակոնքերի ապամոնտաժում | 100հատ | 0,03 |
| | **Կոյուղագծի ներքին տեղամաս** | | |
| 1 | Խեցե լվացարանի տեղադրում, սիֆոնով, թողարկով և ճկուն խողովակով | կ-տ | 3,00 |
| 2 | Զուգարանակոնքի տեղադրում ճկուն խողովակով | կ-տ | 3,00 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արման-Թաման» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,գ. Կարմիրգյուղ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Գավառի մ/ճ,
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115
էլ. հասցեն՝ mouradmo@mail.ru
հեռ. (094)772291

(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 08 » նոյեմբերի 2018թ. կնքված*
*ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՎՏԽ-18/1.1 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 71351540/6 | տեխնիկական հսկողության ծառայություններ | | | | | | | | | | | 145000 | 145000 | **145000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011019776
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Արման-Թաման» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ,գ. Կարմիրգյուղ
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Գավառի մ/ճ
Հ/Հ 11500844540100
ՀՎՀՀ 08417115
էլ. հասցեն՝ mouradmo@mail.ru
հեռ. (094)772291

(ստորագրություն)
Կ.Տ

*Հավելված 3*
*« 08 » նոյեմբերի 2018թ. կնքված*
*ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՎՏԽ-18/1.1 ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*« 08 » նոյեմբերի 2018թ. կնքված*
*ՀՀՔԿԴ-ԳՀԾՁԲ-ԳՎՏԽ-18/1.1 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն